ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 պայմանագրում 2019 թվականի նոյեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1617-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	2019թ. համար լրացուցիչ ֆինանսական միջոցի տրամադրում և առաջանցիկ շինարարական աշխատանքների իրականացման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 4.1.2 և 7.3 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

ք. Երևան <<29>> նոյեմբերի 2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արման-Թաման>> ՍՊԸ -ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.11.2019թ. N 1617-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 18.01.2019թ. կնքված համաձայնագիր N 2-ի

ա) 1.1 կետում <<2 263 400 (երկու միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր)>> թիվը և բառերը փոխարինել <<2 973 400 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր)>> թվով և բառերով,

բ) վճարման ժամանակացույցում <<դեկտեմբեր>> և <<Ընդամենը տարի>> սյունակների <<2 263 400>> թվերը փոխարինել <<2 973 400>> թվերով,

գ) 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

<<1.3 Համաձայնագրի գնից մինչև 710 000 (յոթ հարյուր տաս հազար) ՀՀ դրամը՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

_____ Մ. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.